

372.21

9-95

85

ժարակ. Կովկաս. Գրական.— Զարարիայ Գրիգորեանցի.

# ԲԱՅԱՏՐԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ

«ՄԱՆԿՈՒԹԻՒՆ» կոչուած պատկերազարդ  
գրքոյկի:

20196



Աշխատասիրեց  
ԶԱՔ. ԳՐԻԳՈՐԵԱՆՑ

ԹԻՖԼԻՉ

Տպարան Մ. Շարաձէի և ընկ.

Типог. М. Шарадзе и К<sup>о</sup> Ник. ул. д. 21.

1895

01-4

«ԿՈՎԿԱՍՏԵԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑԻ»

Չաք. Գրիգորեանցի հրատարակութիւնները.

Ռ. Կ.

1. Ա.Մ. Ե. Պ.—Գիւցազունք բոս Խորենացւոյ Հալի, Սրամ, Վահագն, պատկերներ պատմական կեանքից — 30
2. Պօլուիմպերեալ (մանկական թատրոն) կատակերգութիւն 2 արարուած. թարգմ. Յով. Նազարեանց — 20
3. Եղնիկ քահ. Երզնկեանց—մանկական երգեր և պար երգեր . — 20
4. — Զայնազրեալ մանկական երգարան՝ երգեր և պար-երգեր ՚ի հրահանգ և ՚ի պետս հոգևոր դպրոց. հայոց . — 40
5. — Զայնազրեալ ազգային երգարան դպրոցների համար . — 80
6. Քամառ-Քաթիպան—մանկական ոտանաւորներ և երգեր . — 20
7. Ծերենց—Երկունք Թ. դարու . 1 —
8. — Թէոգորոս Ռշտունի . 1 —
9. — Թորոս Լէոնի . 1 —
10. Չաղարբէզեանց Յ. — Սասունցի Դաւիթ Գիւցազն . — 20
11. — Հայոց լեզու երկ. տարի — 30

ԳՏՆԻՈՒՄ ԵՆ Ի ՊԱՆԿՍՏ

12. Վիլհելմ-Թէլ—կամ Հելուետիայի ազատութիւնը—բանաստեղծական

2010

372,21  
9-95 46


Հրատարակ. Կովկաս. գրաված.— Չաքարիայ Գրիգորեանցի

ԲԱՅԱՏՐԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ

«ՄԱՆԿՈՒԹԻՒՆ» կոչուած պատկերազարդ գրքոյկի:

1 370  
1901-40

1003  
14820



2002



Աշխատասիրից  
ՉԱԳ. ԳՐԻԳՈՐԵԱՆՑ



ԹԻՖԼԻՉ

Տպարան Մ. Շարաձէի և ընկ.  
Типог. М. Шарадзе и Ко Ник. ул. д. 21.  
1895

8503

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Дозволено цензурою. Тифлисъ, 13 Юля 1895 года.

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ  
ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

206

Մեծարգոյ տիկին

Սօֆիա Բարայեանց,

Որքան ինձ յայանի է, Դուք առաջինը եղաք մեր հայ ազգի մէջ որ մանկական պարտէզ բաց արիք Տփլիստում՝ և այդպիսով առաջին հիմնադիրը եղաք «Հայկական Փրօքելեան ծաղկոցի» մեր հայերիս մէջ 1879 թ.:

Մի և նոյն ժամանակ զուգնթացաբար նախապատրաստում էիք Ձեր բժշկապետ ամուսնի աջակցութեամբ մի քանի տասնեակ չափահաս ընթացաւարտ օրիորդներ, որոնք կարողանային տարածել գանազան հայաբնակ քաղաքներում Ձեր սկսած գործը: Այն, Ձեր ձեռնարկած գործը շուտով արձագանք գտաւ և իրագործուեց, որովհետև նա շատ մօտ էր հայոց պահանջին:

Նախ՝ նոյն իսկ Տփլիստում շատ շուտով բացուեցին մի քանի թաղերում մանկական պարտէզներ. ապա գաւառական մի քանի քա-

դաքններում ես, ինչպէս՝ Ախալցխայում, Թեղա-  
ւում, Նուխիում, Ալէքսանդրոպոլում\*):

Ինքս անձամբ բարոյական մեծ բաւակա-  
նութիւն և անսահման մխիթարութիւն էի զգում,  
երբ հանդիպում էի Ձեր տանը զուարթերես  
մանուկներին. տեսնում էի նոցա պարապմուն-  
քը, նոցա խաղերը, նոցա խմբովին երգելը.  
Երբեմն զաշնամուրի ներդաշնակութեամբ նոցա  
համար կազմուած ուրախ հանդէսները. նոցա  
մանկավայել աստիճանաբար զարգանալը, մայ-  
րենի լեզուի մէջ նոցա յառաջագիմութիւնը.  
Նոցա փոքր առ փոքր բարեկայել և կանոնաւոր  
հասարակական նիստ ու կացին ընտելանալը...

Նոյնը—հասարակութիւնը ապա նկատում  
էր և Զրկիւնեց եկեղեցու և Տփլիսի այլ ծխա-  
կան դպրոցների ծաղկանոցներում:

Թէ ի՞նչը խափանեց այդ սուրբ գործը—  
ինձ համար դեռ պարզ չէ...

Իմ այս պատկերազարդ գրքոյկը որ աւելի

---

\*) Մի քանի ժամանակից յետոյ օրիորդ Գա-  
լիանէ Յովհաննիսեանը (այժմ տիկ. Մատակեան)—  
ինքնաբերաբար բաց արեց Քութայիս քաղաքում  
նոյնպէս «Մանկական պարտէզ» հայոց մանուկների  
համար: Տիկ. Գ. Մատակեանը մանկական պարտէզ-  
ներում աշխատել է՝ և Տփլիսիում, Քութայիսում և  
այժմ Ա. Պոլսում, որը մի քանի տարի է տևում:

փորրատի մանկական հասակն է ներկայացնում,  
մասամբ, նոյն խսկ այդ հասակի համար է յօրինու-  
ած, թէպէտ շատ թերութիւններ ևս ունի. սակայն  
են վստահացայ ձօնել Ձեր անուան, մեծարգոյ  
տիկին, ՚ի յեշատակ ձեր այն գործունէութեան  
յօգուտ հայ մանկաւոյ, որի առիթով ես շատ  
քաղցր ընդէներ եմ վայելել Ձեր տանը, Ձեր  
շուրջը ժողոված մանուկների մէջ:

Այս ձօնը, թէև թոյլ արտայայտիչ Ձեր  
բեղմնաւոր գործունէութեան և ջերմ սիրոյ,  
որ ցոյց էք տուած առ հայկական մանկտին,  
երանի թէ նոյն քաղցրութեամբ ընդունել բա-  
րեհաճէիք, ինչպիսի հրճուանօք յիշում եմ ես  
անցեալը:

Հ ե ո ի ն ա կ.

### Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Հարկաւոր եմ համարում մի երկու խօսք ասել «Մանկութիւն» վերնադրով պատկերազարդ գրքոյկի առիթով, որի բացատրութեան ձեռնարկն է կազմում այս գրքոյկը:

Կրթեալ ժողովուրդների մէջ սովորութիւն կայ՝ թէ մանուկների, թէ պատանիների և թէ երիտասարդների ձեռքը պատկերազարդ գրքեր տալ և մանաւանդ այդպիսի գրքեր նուիրել նրանց թէ Չատիկն, թէ նոր տարի օրը և թէ նրանց ծննդեան օրը:

Աւելի բազմաթիւ են այն գրքերը, որոնք նշանակուած են լինում կարգալ իմացող մանուկների և պատանիների համար այն մտքով, որ պատկերները աւելի հետաքրքիր անեն ընթերցանութեանը և աւելի առիթ տան նրանց շատ կարգալու և ընթերցանութեան սէր գրցելու կարգալ զիտեցողների մէջ: Բայց մանկական այն հասակի համար՝ որ կարգալ չէ իմանում, երբ 3, 4, 5 տարեկան հասակումն

է լինում մանուկը — մի միայն պատկերազարդ գրքոյկներ են տալիս ձեռքը առանց մէջնեւրը, գրած բան տեղաւորելու:

Այդ տեսակ գրքերի քանակութիւնը շատ չէ լինում: Որովհետեւ այդ հասակում աւելի դժուար է մատչելի և հասկանալի բան տալ նրանց ձեռքը, որ շատ թէ քիչ օգտակար կարողանայ լինել և միևնոյն ժամանակ հետաքրքիր:

Մենք փորձ փորձեցինք հէնց այդ փորձահասակ (3, 4, 5 տարեկան) մանուկների համար այս առաջին (№ 1) գրքոյկը յօրինել և նուիրել նրանց և իրանց դեռահաս ու անփորձ մայրերին, քոյրերին և առհասարակ դաստիարակներին:

Որպէս զի մանկահաս ծնողների և անփորձ դաստիարակների համար այս «Մանկութիւն» անուանած գրքոյկի գործ ածելը աւելի դիւրին լինի, ես հարկաւոր համարեցի այս փորձիկ բացատրական ձեռնարկը յօրինել և նուիրել նրանց:

Ես կարծում եմ, որ առանձին դժուարութիւն էլ չէ լինելու նրանց համար, որովհետեւ  
1) խօսելու նիւթը ծանօթ է մանուկներին, նրանց կեանքն է, նրանց ամէն օր տեսածն է:  
2) պատկերներն էլ այնպէս են դասաւորուած: որ հարկաւոր է միայն թերթել և ցոյց տալ

պատկերները, բացատրել թէ այս ինչ պատկերը ինչ է ցոյց տալիս և պահանջել որ մանուկներն էլ կրկնեն. մանուկներն էլ, որոնց արդէն գիտացածը անգիտակցական է եղած մինչև այդ բոպէն, պատկերը տեսնելով, պատմեն իրանց բառերով և որ պատկերի գաղափարը գիտակցանայ նրանց մտքի մէջ:

Ուրեմն մանուկներին այնպիսի բան չենք տալիս, որ նրանց համար նոր և անծանօթ լինի:

Այդ հասակի համար մեր հայերիս գրականութեան մէջ չը կայ գեռ մի քանի ուրիշ բան:

Եթէ այս առաջին փորձը յաջողութիւն ունենայ և ընդունելութիւն գտնի մեր հայերիս ընտանիքների մէջ, մենք այդ ուղղութեամբ հրատարակելու ենք մի շարք՝ 5—6 հատ ևս ուրիշ պատկերագարդ գրքոյկներ՝ աստիճանաբար գարգացնելու—գիտակցական անելու մանուկների միտքը և կրթելու նրանց սիրտը, մինչև որ նրանք գրել-կարդալ սկսեն, դարձեալ այն սկզբունքի վերայ հիմնուելով, որ նիւթը և երևոյթները առաջուց ծանօթ լինին մանուկներին և վերցրած լինին նրանց շրջապատող առարկաներից և իրանց պատահած երևոյթներից:

Պատկերագարդ գրքոյկը պէտք է տալ մանուկների ձեռքը, իսկ այս բացատրական ձեռնարկը դաստիարակների համար է նշանակուած:

Մի նկատողութիւն էլ հարկաւոր է անել. մեր պատկերագարդ գրքոյկի մէջ նկարուած է ասիական օրօրօցը, որը գիտութիւնը այժմ վրնասակար է համարում. բայց որովհետև հայ ժողովուրդի բազմութեան մէջ գեռ գործ է ածուում և այս «Մանկութիւն» անուանուած գրքոյկն էլ բազմութեան համար է յօրինուած, ուստի չէր կարելի դուրս ձգել այդ օրօրօցը պատկերների միջից և մի ուրիշ անծանօթ և խորթ նիւթ տալ մանուկներին հէնց առաջին պատկերից:

Մեր մանուկները շատ խաղեր ունին. բայց այդ բոլորը չէր կարելի մի գրքոյկի մէջ գետեղել հասկանալի պատճառով. գիրքը շատ կը հաստանար, ծախս շատ կ'ունենար և գինն էլ հետևապէս շատերի համար անմատչելի կը լինէր:

ՐԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ

Երբ մանուկների հետ խօսում ես, զրոյց ես անում և կամ մի բան ես ուսուցանում, կրթիչ ես ցանկանում՝ նիւթը վերցրու նրանց ծանօթ և մատչելի բաներից: Հետևապէս, նիւթը՝ նրանց շրջապատող կեանքը և նրանց աշխարհը պէտք է լինի: Իսկ դու, որ մանուկի կամ ծնողն ես, կամ դաստիարակը, — պարտականութիւն ունիս այդ նրան ծանօթ և մատչելի նիւթը, կեանքը, առարկաները, երևոյթները բացատրելու, պարզաբանելու, անգիտակցականը — գիտակցական անելու և ուղղութիւն տալու մանուկների մտքին և զգացմունքներին. մի միայն ամենայն զգուշութեամբ, այսինքն՝ առանց շտապելու և առաջ վազելու՝ փոքր առ փոքր աստիճանաբար — առանց ծանրաբեռնելու մանուկների միտքը, այլ համապատասխան մանուկների հասկացողութեանը և ըմբռնողութեանը:

Լեզուի վերաբերմամբ նոյնպէս պարտա-

կանութիւն կայ, որ մանուկը, — նիւթը ըմբռնելուց յետոյ, աշխատի և ընտելանայ — ասած բառերը պարզ և որոշ արտասանելու և կանոնաւոր կարճ նախադասութիւններով կրկնելու:

Այս «Մանկութիւն» գրքոյի 28 պատկերները ներկայացնում են մանուկների կեանքը — մեր մանկութիւնը: Մեզանից ամէն մէկս տեսնում ենք այժմ այն, ինչ որ մեր գլխովը անցել է, ինչ որ անցնում է և այժմեան մանուկների գլխովը, ամէնի տանը և ամէն տեղ և ինչ որ լինելու է ապագայումն: Հետևապէս նիւթը ամէնուրեք մի և նոյնն է և հանրածանօթ:

Երբ մայրը, քոյրը կամ դաստիարակը տալիս է պատկերազարդ գրքոյի մանուկի ձրոքը, առաջին պարապմունքը պէտք է լինի՝ պատկերների կարճատես և շոկ բացատրութիւնը աստիճանաբար, այսպէս\*):

- Հարց: Այս ի՞նչ պատկեր է (1 պատկեր):
- Պատասխան: Այս՝ օրօրոց է:
- Հր.— Այս ի՞նչ պատկեր է (2-դր):
- Պ—Այս էլ օրօրոց է:
- Հ—Մէջը ո՞վ է պռուկած:
- Պ—Մէջը մանուկ է պռուկած:

\*) Յանկալի պատասխաններ ստանալը:

Հ—Այս ի՞նչ պատկեր է (3-դր):

Պ—Այս էլ օրօրոց է:

Հ—Մէջը ո՞վ է պառկած:

Պ—Մէջը մանուկ է պառկած:

Հ—Օրօրոցի մօտ ո՞վ է նստած:

Պ—Օրօրոցի մօտ մի աղջիկ է նստած.  
(պէտք է ասել, որ օրօրոցի մօտ նստող աղ-  
ջիկը մանուկի մեծ քոյրն է):

Հ—Ի՞նչ է շինում այն աղջիկը օրօրոցի  
մօտ:

Պ—Այն աղջիկը (մեծ քոյրը) օրօրոցը օ-  
րորում է:

Հ—Մի ձեռքում ի՞նչ ունի բռնած, միւս  
ձեռքում ի՞նչ:

Պ—Մի ձեռքում օրօրոցն է բռնել. իսկ  
միւս ձեռքում՝ խաղ-տիկիներ:

Հ—Այս ի՞նչ պատկեր է (4-դր):

Պ—Մայրը ծիծ է տալիս:

Հ—Մայրը ու՞մն է ծիծ տալիս:

Պ—Մայրը իր մանուկին է ծիծ տալիս:

Այսպէս ասա՛ մայրը իր մանուկին օրօրո-  
ցումն է ծիծ տալիս:

Հ—Այս ի՞նչ պատկեր է (5-դր):

Պ—Մայրը լողացնում է մանուկին:

Հ—Մայրը ինչո՞ւմն է լողացնում մա-  
նուկին:

Պ—Մայրը՝ տաշտումն է լողացնում մա-  
նուկին:

Հ—Ո՞վ է կանգնած մօր մօտ:

Պ—Մի փոքր աղջիկ է կանգնած: (Պէտք  
է կրկնել, որ մանուկի մեծ քոյրն է կանգնած  
մօր մօտ. օգնում է մօրը):

Հ—Ի՞նչ ունի բռնած՝ կանգնած աղջիկը:

Պ—Սաւան ունի բռնած:

Հ—Ինչո՞ւ համար է բռնել սաւանը:

Պ—Մանուկին ջրից որ հանեն, շոտով  
սաւանում փաթաթեն:

Հ—Այս ի՞նչ պատկեր է (6-դր):

Պ—Մայրը հաղցնում է մանուկի շորերը:

Հ—Առաջ ի՞նչն է հաղցնում:

Պ—Չապիկն է հաղցնում՝ առաջ-առաջ:

Հ—Ո՞վ է կանգնած նրանց մօտ:

Պ—Մանուկի մեծ քոյրն է կանգնած նը-  
րանց մօտ:

Հ—Մեծ քոյրը ի՞նչ ունի բռնած ձեռքին:

Պ—Մեծ քոյրը մանուկի շորերն ունի բըռ-  
նած ձեռքին:

Որպէս զի միանգամ ընդ միշտ կանոն  
լինի նորատի մայրերի և փոքր մանկանց  
դաստիարակների համար՝ հետեւեալը պէտք է  
աչքի առաջ ունենալ: Փոքր մանուկները, սրճնք  
դեռ չեն վարժուել արագ և վստահ խօսելու,



որոնք միմիայն 2—3 խօսքով են իրանց միտքը արտայայտում և նախադասութիւններ կազմում. նրանց պէտք է օգնել իրանց ասաց նախադասութեանը մի մի բառ աւելացնելով. պէտք է կրկնել տալ այն՝ պարզ և որոշ:

Այս բանի վրայ մեծ ուշադրութիւն պէտք է դարձնել: Օրինակ, դիցուք մայրը հարցնում է իր մանուկին «քոյրը ի՞նչ ունի բռնած»: Մանուկը կը պատասխանի՝ «չոր ունի բռնած»: Մայրը պէտք է բացատրի, հասկացնի և ասել տայ որ մանուկը շորեր ունի բռնած: Ապա, երբ մանուկը այդպէս ասեց. յետոյ մայրը պէտք է աւելացնելով առաջին նախադասութեանը և մի բառ, հարցնի՝ և մեծ քոյրը ի՞նչ ունի բռնած» և պահանջի ու մի երկու անգամ կրկնել տայ ինքն էլ հետը ասելով, թէ «մեծ քոյրը շորեր ունի բռնած»: Երբ մանուկը այդ էլ կըրկնեց՝ պարզ և որոշ բառերով, ապա մայրը կարող է մի բառ էլ աւելացնել առաջուայ նախադասութեանը և հարցնել՝ «մեծ քոյրը ո՞ւմ շորերն ունի բռնած»: Մայրը պէտք է ստանայ դրա պատասխանը՝ «մեծ քոյրը մանուկի շորերն ունի բռնած»:

Իւրաքանչիւր մայր և դաստիարակ նկատած կը լինի ամենայն օր, ամեն մի խօսակցութեան ժամանակ մանուկի հետ, որ իր տու-

ած հարցերին—մանուկը մի կամ երկու խօսքով է պատասխանում:

Ահա այդ ժամանակ մայրը պէտք է մանուկի նախադասութեանը մի-մի բառ աւելացնելով լրացնի նրա տուած պատասխանը. յայտնի բան է, առանց շտապելու համբերութեամբ. առանց վրդովուելու դժուարութիւնների հանդիպելիս և քաղցրութեամբ:

Չարունակներ:

Հ—Մայրը ի՞նչի վերայ է նստած:

Պ—Մայրը աթոռի վերայ է նստած:

Հ—Մեծ քոյրը ի՞նչպէս է կանգնած: Մեծ քոյրը ստրերը ի՞նչպէս ունի դրած:

Պ—(Մայրը իւր մանուկին պէտք է կանգնացնի ինչպէս որ պատկերն է ցոյց տալիս):

Հ—Այս ի՞նչ պատկեր է: (7-դր)

Պ—Մայրը մանուկին խաղացնում է:

Հ—Մայրը նստած է, թէ կանգնած:

Պ—Մայրը նստած է:

Հ—Մայրը ինչի վրայ է նստած:

Պ—Մայրը աթոռի վերայ է նստած:

Հ—Մօր ծնկների վրայ ի՞նչ է դցած:

Պ—Մօր ծնկների վրայ սպիտակ շոր է դցած:

Հ—Այս ի՞նչ պատկեր է: (8-դ)

Պ—Մայրը մանուկի երեսը լուանում է:

Հ—Ջուրը ուր է ածուս:

Պ—Ջուրը մանուկի մեծ քոյրն է ածուս:

Հ—Ջրամանը ում ձեռքին է:

Պ—Ջրամանը մեծ բրոջ ձեռքին է:

Հ—Մայրը մի ձեռքով է լուսնում մանուկի երեսը, թէ երկու ձեռքով:

Պ—Մայրը մի ձեռքով է լուսնում մանուկի երեսը:

Հ—Տաշտը սրտեղ է դրած:

Պ—Տաշտը գետնին է դրած:

Հ—Այս ի՞նչ պատկեր է: (9-դր)

Պ—Մանուկը շոչ է անում, (չորեր թաթ է անում):

Հ—Մանուկը ի՞նչի է—չոչ անում: Ի՞նչի մանուկը մեզ պէս ոտքերի վրայ չէ ման գալիս:

Պ—Մանուկը մեզ պէս չի կարող ման գալ:

Հ—Այս ի՞նչ պատկեր է: (10-դր):

Պ—Մանուկին սայլակում ման են ածում:

Հ—Ո՞վ է ման ածում:

Պ—Մանուկի մեծ քոյրն է ման ածում:

Հ—Այո ի՞նչ պատկեր է: (11-դր):

Պ—Մանուկին ճռեկի մէջ են կանգնեցրել:

Հ—Այս ի՞նչ պատկեր է: (12-դր):

Պ—Մանուկը ճռեկով ման է գալիս:

Հ—Մօան ուր է կանգնած:



Պ—Մանուկի մեծ քոյրը:

Հ—Մանուկի մեծ քոյրն ի՞նչու է մայր

կանգնել:

Պ—Եթէ մանուկը վայր ընկնելիս լինի, մեծ քոյրը խելոյն բռնի:

Հ—Այս ի՞նչ պատկեր է: (13-դր):

Պ—Մանուկ ու շուն է նկարած:

Հ—Մանուկը Բ՛նչ ունի բռնած ձեռքին:

Պ—Մանուկը հաց (կրեկդի) ունի բռնած:

Հ—Չունը ի՞նչ է ուզում մանուկից:

Պ—Չունը ուզում է հացը մանուկի ձեռքից խլել:

Հ—Մանուկը ի՞նչ է անում:

Պ—Մանուկը հացը բարձրացրել է, որ շունը չբռնի:

Հ—Այս ի՞նչ պատկեր է: (14-դր):

Պ—Մանուկը լաց է լինում:

Հ—Մանուկը ինչու է լաց լինում:

Պ—Չունը հացը խլել է ու փախչում է:

Հ—Այս ի՞նչ պատկեր է. (15-դր):

Պ—Մի բանի մանուկներ են:

Հ—Ի՞նչ են շինում մանուկները:

Պ—Երկուսը իրանց խաղ-տիկիկները հետ խաղում են, մինն էլ ամանով միրգ է բերել միասին ուտելու:

Հ—Այս ի՞նչ պատկեր է. (16-դր):

14820

Պ—Մանուկը երեսը լուանում է:

Հ—Ի՞նչ է դրած մանուկի առաջը:

Պ—Լազան է դրած մանուկի առաջը:

Հ—Լազանը ինչի՞ վերայ է դրած:

Պ—Լազանը փոքր տախտի (տարուրեա-  
կայ) վրայ է դրած:

Հ—Ջուրը ո՞վ է անում մանուկի ձեռքերին:

Պ—Ջուրը ջրամանից է թափուում մանու-  
կի ձեռքերին:

Հ—Ջուրը ի՞նչպէս է թափուում ջրամանից:

Պ—Ծորակից է թափուում ջուրը,

Հ—Ի՞նչ պէտք է անել որ ծորակից ջու-  
րը թափուի:

Պ—Ծորակը ձեռով պէտք է բարձրացնել  
և միջի ձողից ջուր կըթափուի:

Հ—Մանուկը ուղի՞ղ է կանգնած:

Պ—Ո՛չ, — մէջքը փոքր ինչ կռացրել է:

Հ—Այս ի՞նչ պատկեր է. (17-դր):

Պ—Մանուկը գլուխը սանդղում է:

Հ—Մանուկը կանգնած է, թէ նստած:

Պ—Մանուկը կանգնած է:

Հ—Ի՞նչ կայ առջևը դրած:

Պ—Առջևը սեղան կայ. սեղանի վրայ դը-  
բած է հայելի:

Հ—Մանուկը ձեռքերով ի՞նչ է անում:

Պ—Մանուկը մի ձեռքով սանդղում է. միւս  
ձեռքով մազերը ուղղում:

Հ—Այս ի՞նչ պատկեր է, (18-դր).

Պ—Մանուկները աչքախիուկ են խաղում:

Հ—Քանի մանուկ է նկարած պատկերի  
վրայ:

Պ—Չորս մանուկ է նկարած պատկերի  
վրայ:

Հ—Քանիսի աչքերն են կապել:

Պ—Մէկի աչքերն են կապել:

Հ—Ո՞ւմ աչքերը որ կապած է, նա ի՞նչ  
է անում:

Պ—Ում աչքերը որ կապած է, նա ու-  
ղում է մէկնումէկին բռնի: Եթէ մէկին բռնի  
այնժամանակ նրա աչքերը կըկապեն:

Հ—Իսկ միւսները ի՞նչ են անում:

Պ—Միւսները կամացուկ մօտենում են աչ-  
քերը—կապածին և նրան խփում ու փախչում:

Հ—Այս ի՞նչ պատկեր է. (19-ը):

Պ—Երկու մանուկ ձիարշաւ են խաղում:

Հ—Ի՞նչ տեսակ ձիեր ունին մանուկները:

Պ—Փայտէ ձիեր ունին մանուկները:

Հ—Ձեռքներին ի՞նչ ունին բռնած:

Պ—Ձեռքներին միմի լախտ ունին բռնած:

Հ—Այդ ձիարշաւը ի՞նչպիսի խաղ է:

Պ—Այդ ձիարշաւը այնպիսի խաղ է, որ

մանուկները միասին վազում են. ով-արագ վազեց և առաջ ընկաւ, նա էլ գերազանցեց միւսներին:

Հ—Այս ի՞նչ պատկեր է. (20-դր):

Պ—Երկու մանուկ փայտերի վրայ կանգնած խաղում են:

Հ—Այդ ի՞նչ խաղ է:

Պ—Այդ այն խաղն է, որ մանուկները փայտերի վերայ կանգնելով ման են գալիս:

Հ—Այս ի՞նչ պատկեր է. (21-դր):

Պ—Այս խաղը չարխի խաղ է:

Հ—Ո՛րն է չարխի խաղը:

Պ—Չարխի խաղը այն է, որ մանուկները ձեռքների օգնութեամբ՝ գլխիկոր պտոյտ են գալիս չարխի նման:

Հ—Այս ի՞նչ պատկեր է. (22-դր):

Պ—Այդ խաղը չորած՝ արթուրմա է:

Մայրը բացատրում է այդ խաղը: Երկուսը մէջք-մէջքի են տալիս. երրորդը նրանց արանքումը չորում է և ձեռքների վրայ յենում. իսկ միւսները՝ մէկմէկ վազելով գալիս են՝ գլուխը գնում չորածի մէջքին և իրանց պցում կանգնածների արանքով միւս կողմը: Եթէ չորս մանուկներ լինին միատեղ, կարելի է այդ խաղը նրանցով ցոյց տալ:

Հ—միշտ միևնոյն մանուկներն են թռչում:

Պ—Ո՛չ, հերթով են թռչում և հերթով են խաղում:

Հ—Այս ի՞նչ պատկեր է. (23-դր):

Պ—Այս՝ կանգնած — արթուրմայ է:

Մայրը բացատրում է: Այս խաղը այսպէս են խաղում: Մէկը մէջքը կռացրած, մի ձեռքն էլ ծնկանը յենած կանգնում է. միւսները հեռուից վազելով թռչում են վրայովը միւս կողմը: Այս էլ հերթով են խաղում:

Հ—Այս ի՞նչ պատկեր է. (24-դր):

Պ—Մանուկները ճլորթի են խաղում:

Հ—Այս ի՞նչպիսի խաղ է:

Մայրը բացատրում է: Քաշ են անում երկու ճիւղանի շուան. դրա վրայ դնում են մի կարճ ու հաստ տախտակ. մի մանուկ կանգնում է տախտակի մի ծայրին, միւս մանուկը՝ միւս ծայրին. մի մանուկ էլ նստում է նրանց մէջ տեղը: Երբ մանուկները այդպէս տեղաւորում են, այն ժամանակ կանգնածներից մէկը՝ կրկնգելով հրում է, բուքնի է տալիս. առաջ մի փոքր անցնելուց՝ միւս կանգնածն է բուքնի տալիս... այդպէս ճլորթին ճոճում է և գնում — գալիս:

Հ—Այս ի՞նչ պատկեր է. (25-դր):

Պ—Երկու մանուկ՝ քոյր ու եղբայր բաւական մեծացել են և գնում են դպրոց:

Հ—Գրանցից սրն է մեծը և սրը փոքրը:

Պ—Քոյրը մեծ է. եղբայրը՝ փոքր:

Հ—Ի՞նչ ունին բռնած ձեռքներին:

Պ—Իրանց պայուսակները:

Հ—Ի՞նչ կայ պայուսակների մէջ:

Մայրը բացատրում է՝ պայուսակների մէջ դրած են լինում՝ գրքեր, տետրներ, քանոն, քարետախտակ, քարեգրիչ, մատիտ և այլն:

Հ—Ուսումնարանի մօտ ի՞նչ է երևում:

Պ—Ուսումնարանի մօտ եկեղեցի է երևում:

Հ—Այս ի՞նչ պատկեր է. (26-դր):

Պ—Մանուկները դաստանը նստած են:

Հ—Ո՞վ կայ նրանց մօտ նստած:

Պ—Ուսուցչուհին է նրանց մօտ նստած:

Հ—Ինչի՞ համար է ուսուցչուհին նրանց մօտ նստած:

Պ—Ուսուցչուհին նրանց սովորեցնում է:

Հ—Ուսուցչուհու առաջը ի՞նչ կայ դրած:

Պ—Ուսուցչուհու առաջը սեղան կայ դրած:

Հ—Այս ի՞նչ պատկեր է. (27-դր):

Պ—Մանուկները խաղում են:

Հ—Մանուկները սրտեղ են խաղում:

Պ—Մանուկները ուսումնարանի գաւթու-մբն են խաղում:

Հ—Ուսումնարանի մօտ ի՞նչ է երևում:

Պ—Ուսումնարանի մօտ եկեղեցի է երևում:

Հ—Մանուկները ի՞նչ են խաղում:

Մայրը բացատրում է՝ մի աղջիկ չուանի երկու ծայրն ունի ձեռքին բռնած և նրա վըրայ թռչկոտում. մի ուրիշ աղջիկ և մի տղայ նրան նայում են. մի աղջիկ էլ նստած է և սրնգապատ է գործում: Երկու տղայ էլ գնդակ խաղում: Երկու ուրիշ տղայ էլ ձիարշաւ են խաղում:

Հ—Այս ի՞նչ պատկեր է. (28-դր):

Մայրը բացատրում է՝ Այս՝ կօշկակարի ընտանիք է:

Հ—Ի՞նչ են շինում նրանք:

Մայրը բացատրում է՝ հայրը նստած կօշիկ է կարում՝ մայրը՝ կանգնած հարթուկ (ու-թօ) է քսում, նրանց մեծ որդին նստած գիրք է կարում, իր գասը սերտում. մեծ քոյրն էլ իր փոքր քոյրիկի հետ թղթի տուն է շինում:

Հ—Սենեակի մէջը ի՞նչ բաներ են երևում:

Մայրը բացատրում է՝ կօշկակարը նստած է նստարանի վրայ. նրա մօտ դրած է մի սեղան, այդ սեղանի վրայ դարսած են նրա գործիքները: Նրա ոտքերի մօտ դրած է տաշտը՝ ջրի համար:

Մայրը կանգնած է և ութօն ձեռքին քը-

սում է: Նրա մօտ, չուանի վրայ կախ են արած ութօ քսած շորերը:

Նրանց մեծ որդին սեղանի առաջ նստած՝ գիրք է կարդում: Սեղանի մօտ դրած է մեծ պահարանը: Այդ պահարանի դռնից կախ են արած բանալիներ: Այդ պահարանի մօտ երևում է դրած աթուռը: Այս կողմն էլ մեծ աղջիկը չորած՝ խաղաթղթերից տուն է շինում և այդպէս խաղում է իւր փոքր քոյրիկի հետ:

Ինչպէս յայտնի է փոքրահասակ մանուկները՝ տպաւորութիւնները շուտով ընդունում են և շուտով էլ մոռանում. այդ պատճառով էլ շուտով ամեն բանից էլ ձանձրանում: Որպէսզի միևնոյն առարկայի կամ երևոյթների տպաւորութիւնները փոքր ինչ երկարատե ու աւելի խորը թափանցեն մանուկների մտքի և սրտի մէջ, պէտք է այդ տպաւորութիւնները կրկնուին և այն էլ՝ մի ուրիշ ձևով մի ուրիշ կերպով: Մենք էլ այդ նպատակը աչքի առաջ ունենալով՝ փոքրիկ ոտանաւորներ գրեցինք միևնոյն պատկերների վերաբերմամբ և միևնոյն բացատրութիւնները տալով, որպէս զի, երբ մայրը բերանացի գրոյցներով մանուկին բաւականին ծանօթացրեց և պատկերների օգնու-

թեամբ՝ խօսելում, բացատրելում և դատելում վարժացրեց. ապա պատկերները մանուկի ձեռքը տալով և ինքը մայրը այս ոտանաւորները երգելով՝ մի որ և իցէ երգի եղանակով կարողանայ նորից հետաքրքրութիւն շարժել մանուկի մէջ: Բացի դրանից՝ վերոյիշեալ պատկերները իրենց բացատրութեամբ մանուկների միտքը զարգացնելով, հարկաւոր է որ սիրտն էլ զարգացնեն: Երգի ձևով արտայայտած զգացմունքները աւելի կրթող և դաստիարակող նշանակութիւն ունին և երգի ձևով և եղանակով ձեռք բերած տպաւորութիւնները աւելի երկարատե են մնում մանուկի մտքի և հոգու մէջ:

Մնում է ասել որ ոտանաւորները, լոկ ոտանաւորներ են և մենք երբեմն համալնութիւն չենք ունեցած կարծելու թէ ոտանաւորներ դրելու ընդունակութիւն ունինք:

Ի-ԻՆ ՊԱՏԿԵՐԻ ԱՌԻԹՈՎ:

- Այս օրօրոց է
- Մանուկի համար.
- Փափուկ անկողին
- Վրէն կրգցեն,
- Մանուկին մէջը՝
- Տար և փափուկ:
- Վը քնացնեն:

2-դ.

Այս էլ օրորոց է,  
Մանուկը մէջը քնած է.

Սիրուն աշերը  
Մաւանով ծածկած,  
Նա պինդ-պինդ կապուած.  
Թէ կապանքը չլինի,  
Մանուկը վայր կընկնի  
Ոտքն ու ձեռքը կըլնասի:

3-դ.

Այս էլ նոյնպէս օրորոց է:  
Մանուկը մէջը քնած է,  
Եւ նրա փոքրիկ քոյրիկը:  
Յատակի վրայ նստած է:

Իւր խաղտիկինը ձեռքին՝  
Օրորոցը միւս ձեռքով  
Օրորում է նա մանուկին  
Մեղմ ու բազր տալով ձայնին:

Սիրուն եղբայրիկ  
Աշերդ խփիբ  
Եւ անուշ քնիբ:

Ես քեզ օրորեմ  
Որ լաց չլինես,  
Եւ հանգիստ քնես.

Քնորոյ եղբայրիկ՝  
Չուտով մեծացիր,  
Լաւ-լաւ տիկիներ  
Ինձ համար գնիր:

4-դ.

Մանուկը քնից զարթած է,  
Օրորոցումը պառկած է.

Օրորոցին յենուելով  
Մայրը ծիծը հանել է,  
Ծիծը բերնում գրել է,  
Որ մանուկը կշտանայ  
Նորից անուշ քնանայ:

Մանուկը միայն քնել գիտէ,  
Քնից յետոյ ուտել գիտէ.  
Ուրիշ ոչինչ չէ իմանում  
Գիշեր ցերեկ՝ ուտում-քնում:

5-դ.

Մայրը չոքել է գետնին,  
Տաշտը գրել առաջին.

Մէջը գոլ ջուր լցրել,  
Մանուկին տաշտը բցել:

Երկու ձեռքով պինդ բռնել  
Նրա գլուխը բարձրացրել.  
Որ բերանը ջուր չմտնի  
Եւ մանուկը չըխեղդուի:

Քոյրիկը նրա մօտը կանգնած  
Մանուկի սաւանը բռնած  
Որ հենց նրան ջրից հանեն,  
Իսկոյն սաւանում փաթաթեն:

6-դ.

Մայրը աթոռի վրայ է նստած  
Եւ մանուկը ձեռքին բռնած,  
Իւր գոգումը կանգնացրել  
Չապիկը վրան հագցրել:

Քոյրը եղբօր մօտն է կանգնած  
Երեխայի շորը բռնած.  
Այգալիսով նա մօրը օգնում:  
Չորերը մէկ-մէկ հասցնում:

7-դ.

Մայրը մանուկին լողացրեց,  
Նորան մաքրեց-զովացրեց:  
Ապա շորերը հագցրեց:

Երկու ձեռքով պինդ բռնել է,  
Ծնկների վրայ կանգնեցրել  
Դան-դան ասելով խաղացնում է:

Դան-դան՝ դանեցի,  
Բերանդ՝ եկեղեցի,  
Ներս մտայ՝ համբուրեցի,  
Դուրս եկայ՝ բարեցի,  
Վարդաջրով ջրեցի,  
Վարդ-մանուշակով փռեցի:

8-դ.

Մայրն աթոռի վրայ նստած,  
Մանուկին բռնել կողքանց,  
Մանուկը բնից դարձել է,  
Մայրը երեսը լուանում է:  
Քոյրիկը ջրամանից  
Կամաց գոլ ջուր է անում  
Մայրը՝ բուռը լցրած  
Մանուկի երեսը՝ լուանում:

9-դ.

Մանուկը նոր չոչ է անում,  
Ոտքով ման գալ չէ կարանում.  
Ձեռներն էլ նրան են օգնում,  
Եւ այգալիսով տեղափոխում:



10-դ.

Նստեցրել են մանուկին,  
Փոքր սայլակի միջին.  
Ոտիկները ծածկել են,  
Չեռները ազատ թողել.

Մեծ բոյրը սայլակն է քաշում,  
Եւ եղբօրը ման ածում.  
Սյդպէս եղբօրը ծառայում  
Նրան զբաղեցնում-զուարճացնում:

11-դ.

Փոքրիկ մանուկին  
Ճռեկի միջին  
Ոտքի են կանգնեցրել,  
Որ լաւ սովորի,  
Տեղը պինդ կանգնել:  
Որ ոտիկները ամրանայ  
Ինքը իրան՝ սովորի-մանկայ:

12-դ.

Մանուկը իր ճռեկը  
Սյժմ ման է ածում,  
Քոյրն էլ ետեից,  
Նորան զգուշացնում,  
Որ մանուկը  
Վայր չընկնի,

Ոտքն ու ձեռքը

Չը ցաւցնի:

13-դ.

Մանուկը նստած է  
Եւ շաքարի հացը  
Եր ձեռքին բռնած է:

Փոքրիկ շունն էլ  
Մօտ է գնացել,  
Չեռքից ուզում  
Հացը խլել:

Մանուկը հացն է բարձրացնում,  
Եւ շունը դունչը չի հասցնում,  
Մանուկը ուրախ ժպտում է,  
Որ շանը այդպէս յաղթում է:

14-դ.

Չունը հացը խլել է,  
Բերանում բռնած՝ փախչում է.  
Մանուկը շատ նեղացած՝  
Լալիս է բերանը բաց:

15-դ.

Մանուկները ժողովել են,  
Տիկիները հաւարել են.  
Մէկն ամանով միրգ է բերում  
Ուտում, զողոն-բողոն անում:

16-դ.

Փոքրիկ մանուկը  
Այժմ մեծացել,  
Եւ իր թևերը  
Վերև բարձրացրել:

Էլ իրա մօրը  
Նա չէ նեղացնում,  
Այլ ջրամանից  
Սառը ջուր ածում,  
Եւ իւր երեսը  
Կնքը լուանում:

17-դ.

Սեղանի վրայ  
Հայելին դրած՝  
Մանուկը նըրա  
Առաջը կանգնած,  
Աջ ձեռքին սանդրը  
Նա ամուր բռնած՝  
Մազերը սանդրում՝  
Եւ գեղեցկանում:

18-դ.

Մանուկները ժողովել են,  
Աչքախփուկ են խաղում.  
Մէկի աչքերը կապել են,  
Ամէն կողմից հաս խփում:

19-դ.

Երկու մանուկ խաղում են,  
Փայտերը ձի են շինել.  
Մտրակներն էլ բռնել են,  
Փոքրիկ ձիարչաւ սարգել:

20-դ.

Երկու մանուկ փորձում են,  
Փայտերի վերայ կանգնել,  
Զգուշութեամբ շրջում են  
Այդ փայտերով՝ դէս ու դէն:

21-դ.

Երեք տղայ խաղում են,  
Ձեռքերի վրայ գլխի վայր.  
Արագ միմեանց կտակից  
Նորա շարխի պէս գնում են:

22-դ.

Հինգ տղայ են հաւաքուել,  
Եւ մէջք-մալլախ են խաղում,  
Երկուս՝ մէջք-մէջքի տուել,  
Մէկին արանքում՝ ծունկ չորքել:

Ապա հերթով գալիս են,  
Վազ-վազ սրբնթաց գնում,  
Գլուխը չորթածի մէջքին  
Դնում՝ և միւս կողմն իրանց պցում:

23-դ.

Երեք տղայ խաղում են,  
Մէկը մէջքը կըռացրել,  
Երկու ձեռքով ծնկներին  
Չատ պինդ-ամուր է յենուել:  
Ապա միւսները կարգով  
Դալիս, թռչում վրայով:

24-դ.

Երեք մանուկներ խաղում  
Ճըլորթով գուարճանում,  
Գերանից չուան կախ արել,  
Վրան տախտակ ամրացրել:

Մէկը կանգնել է մի ծայրին,  
Իսկ երկրորդը միւս ծայրին,  
Հերթով բուքնի են տալիս,  
Մէջ տեղ նստած փոքրիկին  
Իրանց հետ թռչել տալիս:

25-դ.

Քոյր ու եղբայր ուսումնարան  
Գնում շտապ, որ չուշանան,  
Երևում է հեռուից՝  
Դպրոցը՝ եկեղեցուն կից:

26-դ.

Դասատան մէջ նստոտել  
Վարժուհին, աշակերտներ.

Նրանց առջևն է դրած  
Երկայն փայտեայ սեղաններ,  
Որոնց վրայ դարսած են  
Գիրք ու գրիչ, տետրակներ:

27-դ.

Մանուկները դուրս են եկել,  
Դասամիջոցին խաղալու,  
Ամբողջ բազը նորա բռնել  
Փոքր ինչ գուարճանալու:

Մինը այնտեղ գնդակ խաղում  
Միւսը չուանով թռչկոտում,  
Երրորդը իւր ձեռագործը  
Ձեռքին բռնած շարունակում:

Մի քանիսն էլ վազվզում  
Այս կողմ—այն կողմը ընկնելով  
Չուանի ծայրը բռնում են,  
Զիալարին հետեւելով:

28 դ.

Անս ամբողջ մի ընտանիք՝  
Ծնողներն ու իրանց որդիք,  
Հայրը նստած՝ կօշիկ կարում,  
Մայրը կանգնած՝ ութօ քսում.  
Մեծ որդին իւր դասը կարգում,  
Փոքրը—փոքրիկին զբաղեցնում:

Որովհետև այս ձեռնարկը պէտք է գտնուի անփորձ և նորատի մայրերի ձեռքին, ուստի շատ օգտակար է և անհրաժեշտ, որ ներանք գիտենան նորածին մանկանց խնամելը և մեծացնելը: Նա մանաւանդ որ մեր ազգականց դպրոցներում այժմ հնարաւոր չէ ոչ առողջապահութեան և ոչ մանկատաժութեան դասաւանդութիւնը, բացի մարդակազմութիւնից, որը սովորեցնում են երկդասեան ուսումնարաններում:

Այս նպատակով ես օգտակար համարեցի գոկտոր պ. Բ. Մինէճեանի Գ. Պոլսում տպագրուած գրքոյկի 16 կտոր խրատները մտցնել այս ձեռնարկիս մէջ:

Գ. Բ. Մինէճեանի գրքոյկի վերնագիրն է՝ «Մանկանց քիչկը կամ առաջնորդ ծնողաց եւ ստնտուաց»:

Գ. Բ. Մինէճեանի յառաջաբանը:

«Նորածին մանկան խնամելու և մեծացնելու համար կարևոր եղած զգուշութեան կանոնները յաճախ չըգիտենալով, ծնողները դժբաղդութիւն են ունենում տեսնելու իրենց զաւակների տկար մնալը, անբուժելի հիւանդութեանց ենթարկուելը և մինչև իսկ մեռնելը:

«Ամեն ծնողի պարտքն է սովորել՝ մանուկի աննդեան, հագուստի, մաքրութեան և քը-

նելու վերաբերեալ մանկավարժական առողջապահութիւնը, որպէս զի ծնողը լաւ կերպով կարող լինի կատարել իւր պարտքը եւ քաջառողջ մեծացնել իւր զաւակները:

«Երկար գրուածքներ շատերը չեն կարդում, ուստի ուզեցինք մի քանի բացորոշ կանոնների մէջ ամփոփել այն խնամքները և զգուշութիւնները՝ որ կարևոր և անհրաժեշտ են նկատուած Եւրոպայի երևելի բժիշկների կողմից»:

Հ Ր Ա Տ Ա Ն Ղ 1.

Մինչև 6 կամ 7 ամիսը՝ նորածին մանուկի սնունդը միմիայն կաթը պէտք է լինի:

Մանուկին կաթ տալու (զիեցնելու) եղանակներ են՝ Ա, մօր կաթը տալը, Բ, ծծմօր կաթը, Գ, մի միայն անասնի կաթը—ծծակով և Դ. թէ մօր և թէ անասնի կաթը փոփոխակի:

Ամենաօգտակարը մօր կաթն է, եթէ սակայն մայրը քաջառողջ է և կաթը՝ անդարար ու բաւական է:

Կան մի քանի կաթնեղէնի արուեստական պատրաստութիւններ, ինչպէս Լիէպիկի կաթը և Նեսթլէի ալիւրը, որոնց մասին ումանք ա-

տում են, թէ կարող են նորածին մանուկին մեծացնել առանց ուրիշ կաթ տալու. բայց փորձառութիւնը մեզ ցոյց տուեց որ դրանք անբաւական են նորածինը սնուցանելու. մանաւանդ անբաւական են առաջին ամիսներում. այլ սակայն կարող են մեծապէս օգտակար լինել օժանդակարար գործ ածելով մօր կաթի հետ, եթէ մօր կաթը անբաւական լինի: Չատ վնասակար է հէնց առաջին ամիսներից սկըսած՝ մանուկին կարծր (պինդ) ուտելիքներ տալ, ինչպէս՝ հաց, խմորեղէն, միս, ընդեղէն և պը տուղներ:

Հ Ր Ա Տ Ա Ն Պ 2-ը.

Հէնց առաջին օրերից սկսած՝ պէտք է կարգ-կանոն դնել կաթ տալու (գիեցման) վերաբերմամբ: Նորածինը ցերեկով՝ մօտաւորապէս երկու ժամը մի անգամ՝ պէտք է կաթ չձծծի. իսկ գիշերը երեք կամ չորս ժամը մէկ անգամ: Թէ նորածնի և թէ ծծմօր լաութեան համար երկու ամսից յետոյ պէտք է գիշերները երկու անգամ միայն կաթ տալ: Նախ կէս գիշերից երկու ժամ առաջ պէտք է մանուկին լաւ կըշտացնել և մէկ էլ առաւօտեան մօտ կաթ տալ — առաջի իրիկուան ուտելուց 7—8 ժամ յետոյ:

Ամէն մէկ ժամը 10—12 վայրկեան պէտք է տևի:

Հ Ր Ա Տ Ա Ն Պ 3-ը

Եթէ մօր կաթնատութիւնն անկարելի լինի, լաւագոյն եղանակն է ծծմօր միջոցով սընուցանելը: Թէպէտ ընդհանրապէս պահանջուում է որ ծծմայրը 20—30 տարեկան լինի. բայց այս պարագայիս մէջ առաջին գիտելի կէտը սչ թէ ծծմօր տարիքն է, այլ առողջութիւնը և կաթի որակնութիւնը: Տեսնուած են 30—40 տարեկան և ատամները փթած կամ թափած ծծմայրեր՝ որոնք աւելի քաջաուողջ գաւակներ են առաջ բերել: Նոյնպէս թէև լաւագոյն է որ կաթի նորութիւնն ու հնութիւնը մանուկի տարիքին մօտենայ, բայց տեսնուած է որ արդէն հնացած կաթն էլ կարողացել է օգտակար լինել: Չատ փոքր մանուկներին, երբ ծծմայրը առողջ ու կաթն ուժով է եղած:

Յղութիւնը միշտ չէ վնասում ծծկեր (գիեցիկ) մանուկին. բայց լաւ է որ յղի մայրը կամ ծծմայրը կաթը տալուց դադարի և անհրաժեշտ է՝ երբ մանուկի վնասուիլը երևայ:

Սխալ է այն կարծիքը թէ՛ ծծմայրը այս կամ այն կերակուրները պէտք է ուտի որ կա-

Թը առատ լինի: Քաւական է որ ծծմայրը լաւ սնունդ առնի. խառն՝ թէ մսեղէն և թէ բանջարեղէն: Եթէ ծծմայրը շատ գինի խմի, կաթը կըտարանայ և գրգռում կըպատճառի մանուկին:

Հրահանգ 4-դ.

Եթէ մօր կամ ծծմօր միջոցով կաթ տալը անկարելի լինի, այն ժամանակ պէտք է կովի կաթ տալ ծծակով:

Կաթը երբէք չպէտք է եփել, այլ բաւական է շիշը եռացող ջրի մէջ բռնելով փոքր ինչ գոլ (գաղջ) անել: Ամստուայ տաք ժամանակ միայն պէտք է կաթը եփել, որպէս զի չթթուի,

Առաջին ամսուսը օրը 100 գրամ, հինգից մինչև վեց թէյի գդալ կաթ պէտք է տալ մանուկին, կէս առ կէս մաքուր ջուր խառնելով, եթէ կաթը գուտ է: 2-դ, 3-դ, 4-դ և 5-դ ամիսներում 200 գրամ (տասը թէյի գդալ կաթ կարելի է տալ առանց ջրի):

Այս կաթի մէջ պէտք է աւելացնել առաջին ամիսը 10 գրամ շաքար. 2-դ, 3-դ, 4-դ և 5-դ ամիսներում 15 գրամ (գդալ ու կէս). իսկ հետեւեալ ամիսներում՝ 20 գրամ (երկու

գդալ) շաքարը սովորական շաքար կարող է լինել. բայց լաւ ևս է կաթի շաքար խառնել:

Կաթի մէջ՝ ջրի փոխանակ՝ վարսակի, գարու, ցորենի, բրնձի և այլն ջուր խառնելը վրնասակար է:

Թէև վերոյիշեալ կանոնները հիմնական են, բայց մայրը կարող է կաթի բանակութեւնը աւելացնել և ջրինը պակասեցնել, երբ տեսնի որ շարունակ մի բանի օր մանուկը ծծակի մէջ գտնուած կաթը հատեցնում է մինչև վերջին կաթիլը:

Ծծակով տուած կաթը նոյնպէս 2 ժամը մէկ անգամ պէտք է տրուի. մանուկին ծծակով կաթ տրուած ժամանակն իսկ կարող ենք առաջին հրահանգի մէջ յիշուած Լիէպիկի կաթը և Նէսթլէի ալիւրն օժանդաբար գործ ածել, բայց միշտ կաթնտուութեան վերջին ամիսներում:

Հրահանգ 5-դ.

Կաթ տալու համար միմիայն ապակեայ ծծակ պէտք է գործ ածել, որի շէնքը, որբան կարելի է, պարզ պէտք է լինի, որպէսզի գործածուելուց անմիջապէս յետոյ դիւրաւ (հեշտ) մաքրուի:

Երբ ծծակի մէջ եղած կաթը մանուկը մէկ անգամում բոլորովին չըհատեցնի, պէտք է մնացորդ կաթը թափել և հետևեալ անգամում կրկին նոր կաթ լցնել:

Հ Ր Ա Տ Ա Ն Ձ 6-դ.

Մանուկի ձայնը կարելու կամ անօթութիւնը յագեցնելու համար չպէտք է *տրտէք* էմչիկ ասուած հացի փոք կամ ծեծուած շաքարանուշ պարունակող ծծիկներ դնել նրա բերանը: Սրանք բերանի ծանր հիւանդութիւններ առաջ կըբերեն և ո՛չ միայն սննդաբար չեն, այլ և մանուկին կըհիւծեն:

Հ Ր Ա Տ Ա Ն Ձ 7-դ.

Թէև մայրը կարող լինի ինքն դիեցնել (կաթը տալ) որդուն, բայց, երբ կաթը անբաւական լինի և կամ տնից բացակայութեան պատճառներ ունենայ, այն ժամանակ հարկաւոր կըլինի դիմել խառն կաթնատուութեան. այն է՝ մօր ստինքով և միանգամայն ծծակով դիեցման: Այս դէպքում առաջին երեք ամիսները լաւ է օրը միայն 2 անգամ ծծակ տալ. չորրորդ ամսումն՝ օրը 3, մինչև վեցերորդ ամի-

սը օրը 1 կամ 2 ծծակ պէտք է աւելացնել. բայց միշտ պէտք է նայել որ աւելի կամ գոնէ նոյնքան անգամ մօրից ծծէ, որքան ծծակից և թէ փոխ առ փոխ տրուին ծիծն ու ծծակը:

Ամէն դէպքում օգտակար է մանուկին ծրծակով կաթ ուտելուն վարժեցնել, որովհետև մօր կամ ծծմօր պատահական տկարութեան ժամանակ կամ ուրիշ ո և է ստիպողական հանգամանքում պէտք կը լինի դրա գործածելը:

Հ Ր Ա Տ Ա Ն Ձ 8-դ.

6-դ կամ 7-դ ամսից, կամ առաջին ատամի երևալուց յետոյ միայն պէտք է սկսել կաթնով և ճերմակ հացով, բրնձով, ցորենի ալիւրով և կամ ուրիշ ալիւրներով (ինչպէս՝ արարօթ, սագու, թաքիօքա), եփուած թեթեւ ապուր տալ. նախ՝ օրը մէկ անգամ, և յետոյ 9-դ և 10-դ ամիսներից սկսած՝ օրը 2 անգամ, սկզբից փոքր քանակութեամբ և հետզհետէ աւելցնելով: Այս սնունդը պէտք է տալ մանուկին կաթ ուտելուց 2 ժամ յետոյ:

Վերոյիշեալ ուտելիքները կարելի է նաև մտի կամ հաւի ջրով եփուել, երբ կաթով եփուածները մանուկը չախորժի: Գէպի 10-դ ամիսն կարելի է նաև թերխաշ հաւկիթ տալ:

Մանուկի ծարաւը կտրելու համար նախապատիւ է մի քիչ զուտ ջուր տալ, կամ շաքարաջուր և կամ խիստ քիչ գինով գունակորած ջուր:

Այս ուտելիքները գործը այնպէս պէտք է կարգադրել, որ մանուկը մէկ տարեկան եղած ժամանակ սկսի քիչ-քիչ կաթնից կտրուելուն վարժուիլ: Բայց մանուկը կաթնից կտրուելու համար պէտք է որ 12 ատամները համած ըլլի, այսինքն՝ 14—16 ամսական լինի և ինքն էլ քաջաւողջ:

Ստիպողական պարագաների մէջ, եթէ մանաւանդ մանկան դարգացումները, կարելի է աւելի կանուխ, զօր օրինակ, մէկ տարեկան դարձած՝ կաթնից կտրել: Ընդհակառակն՝ երբեմն հարկ է լինում մինչ 18-դ ամիսն սպասել. այս հարկաւոր է՝ երբ մանուկը տկար է մնացել կամ դիեցումը ծծակի միջոցով է կատարուել:

Գարունն ու աշունը կաթնից կտրելու ամենայարմար եղանակներն են:

Կաթնից կտրելուց յետոյ՝ տակաւին 5—6 ամիս կաթնով կամ մսի ջրով ապուր, թերխաշ հակիթ և խիւս (լափա) պէտք է տալ:

Աղը անհրաժեշտ է:

Եթէ մանուկները փորլուծութիւն ունենան, իւզալի մսի ջուրը կը վնասի:

Միս, ձուկ, ընդեղէն, բանջարեղէն, թեթի անուշեղէն մանուկի 20 ատամները դուրս գալուց յետոյ պէտք է տալ, այսինքն՝ երբ մանուկը երկու տարեկան դարձած լինի:

Հր ա հ ա ն գ 9-դ.

Նորածին մանուկը ինչ եղանակով էլ որ մեծանայ (մօրը կամ ծծմօր կաթնով կամ ծրծակով), պէտք է որ օրը միջին հաշուով, 7—10 գրամ աճի առաջին 5 ամիսներում. իսկ 3—5 գրամ հետեւալ 7 ամիսներում և մէկ տարեկան եղած ժամանակ պէտք է կշռի 9 րիլո\*) այսինքն սկզբնական ծանրութեան եռապատիկը և այս ստուգելու համար ամեն շաբաթ պէտք է մանուկին կշռել և ծանրութիւնը խնամքով նշանակել:

Եթէ այս աճումը չնկատուի, յայտնի է թէ մանուկը հիւանդոտ է, կամ լաւ սնունդ չէ ստանում. հետևաբար անհրաժեշտ է բժշկի գլխի:

Հր ա հ ա ն գ 10-դ.

Ամէն առաւօտ, կաթ կամ կիրակուր տալուց առաջ՝ մանուկի մարմինը պէտք է լուսա-

\*) Քիլո—2 ֆունտ և 42 գօլօտնիկ:



նալ կրակի մօտ՝ սպունգով և դաղջ ջրով, մասնաւորապէս ծննդական անդամները, գլուխը և նրա վրայի աղալը լաւ մաքրել և անմիջապէս լաւ չորացնել մարմինը:

Երկու օրը մի անգամ հանդերձները պէտք է փոխել և շարաթը 1—2 անգամ առաւօտները բոլոր մարմինը աւազան դնել 4—5 վայրկեան գաղջ ջրով, որի տաքութիւնը 32 կ. աստիճանից աւելի չպէտք է լինի:

Արեւելեան բաղանիքները *արգելուած պէտք է լինին* նորածին մանուկներին: Այսպիսի բաղանիքների սաստիկ ջերմութիւնը և պարունակած շոգին մեծ նեղութիւններ են տալիս մանուկին և երկիւղ ազդելով ու ճիշեր հանել տալով՝ ջրային գրգռումների և այլ վնասակար հետեանքների են ենթարկում նրան:

Հ Ր Ա Տ Ա Ն Ղ 11-դ.

Բացարձակապէս պէտք է մէկ կողմը թողնել հին աւանդական *պատատը* (փաթաթմանը), որը մանուկի աճելու դէմ արգելք է լինում: Որչափ մանուկը իւր շարժումների մէջ ազատ լինի, այնչափ զօրաւոր և բարեկազմ կըլինի:

Գլխի վրայ կտաւից գլխարկ, մինչև փորի ստորին ծայրը հասնող ու թևեր մինչև դաս-

տակը (բլակը հասնող) շապիկ, բրդէ փոքր երկու թենոց, որոնք ետևի կողմից պէտք է կապուին և մինչև ձեռքերը ծածկեն. կտաւից կամ բամբակից եռանկիւնի մի շոր՝ որ միջից պատելով՝ ծայրը սրունքների միջից վեր առնուի և անգլխական գնդասեղով փորի վրայ միւս ծայրերի հետ կցուի և բրդից քառակուսի մի խանձարուր, որ ոտքերովը պատի մարմինը՝ ձեռքերը դուրս թողնելով և ոտքերի շարժուելու ազատութեան շարգելելով:

Երկու ամսից յետոյ: այլ ևս պէտք է մի բիշ երկայն շապիկ, կիտազգեստ, շրջագգեստ, անդրավարտիկ, գուլպայ և բրդէ ոտնաման հագցնել. բայց միշտ պէտք է հոգ տանիլ որ զգեստները լայն, կակուղ և փափուկ լինեն:

Հ Ր Ա Տ Ա Ն Ղ 12-դ.

Չատ կարևոր է մանուկին պատասպարել սաստիկ ցրտի կամ շոգի դէմ՝ թէ՛ տանը և թէ՛ փողոցում. մանուկի սենեակի միջակ տաքութիւնը պէտք է լինի ձմեռը 15—16 աստիճան (Գելսիոսի—հարիւրաչափ ջերմաչափով) և օրը մի քանի անգամ նրա բնական սենեակի օդը պէտք է փոխել, բացի անձրև, ձիւն կամ սառտիկ օդ փշած օրերը: Չատ վտանգաւոր է մա-

նուկին պառկեցնել՝ իր մօր կամ ծծմօր անկողնում:

Անկողինը՝ բուրդ, փետուր կամ բամբակ չպէտք է լինի, որովհետև սրանք մէջի հոտը իրանց մէջն են պահում, այլ վարսակի կճեղ, պտեր և մամուռ պէտք է լինի, որպէս զի ստէպ (շուտ շուտ) նորոգուին: (Հետևաբար սիւպէկ գործածելուց բոլորովին պէտք է հրաժարուել):

Նորածինը պէտք է փոքր ինչ մէկ կողմը դարձած պառկի:

Հ Ր Ա Տ Ա Ն Պ 13-ը.

Լոյսը եւ մաքուր օդը ամենակարևոր պայմաններն են մանուկի բարւոք աճելու և զարգանալու համար: Ուստի պէտք է որ մանուկի բնակած սենեակը լուսաւոր և օդը մաքուր լինի և ստէպ նորոգուի:

Նոյնպէս պէտք է մանուկին դուրս հանել մինչև իսկ ծննդեան երկրորդ շաբթից սկսած. բայց առաջին երկու, երեք ամսուայ մէջ պէտք է գլուխը բարձի վրայ կրթնած պահել:

Քունը արգելք չըպէտք է լինի մանուկին ամանածելու ժամանակ, որովհետև մանուկը աւելի լաւ կրքնի մանածելիս:

Պէտք չէ դուրս տանել անձրեի, ձիւնի և խստաշունչ օրերում: Չմեռը պտոյտը պէտք է կէս օրից յետոյ կատարել, եթէ օդը մեղմ է. իսկ ամառը՝ օրից առաջ և վերջը միանգամայն:

Մանուկների կառքերը շատ օգտակար են. բայց պէտք է որ ամառ ժամանակ և հարթ գետինների վրայ գործածուին:

Հ Ր Ա Տ Ա Ն Պ 14-ը.

Չպէտք է շատ շտապեցնել մանուկին մանդալիս. պէտք է թոյլ տալ որ ինքն իրան գետնի վրայ քաշկուտուի և կամաց-կամաց վերկենայ: Հետևաբար անուաւոր գործիքները և կողովները վնասակար են կամ կարող են շուտով վնասել, եթէ շատ զգուշութեամբ գործ չածուին:

Հ Ր Ա Տ Ա Ն Պ 15-ը.

Մանուկների փոքր հիւանդութիւնները զոր օրինակ խիթքը (սանճը), փորհարութիւնը, յաճախ փոխումը, հազը չպէտք է առանց դարմանի թողնել:

Մանուկի փորը, եթէ օրը 2—3 անգամ

գուրս չըտանի, ասել է թէ՛ պնդութիւն ունի  
և խիժք է տեղի ունենում:

Սրա համար պէտք է 1—2 անուշի գդալ մա-  
նիէզիս, տալ, որի լաւագոյն տեսակն է անգ-  
լիական Հէնրիինն, որպէս զի փորը բաց լինե-  
լով խիժքն անցնի:

Եթէ մանուկը փորհարութիւն ունենայ, մի  
գաւաթ կաթնի մէջ մի քիչ զեղազործի շինած  
կրի ջուր — մէկ օրուայ համար 10—25 գրամ —  
կամ  $\frac{1}{2}$ —1 գրամ քիսմիւթի ֆոշի խառնելով  
պէտք է խմեցնել 24 ժամուայ մէջ մաս առ  
մաս:

Վիշիի ջուր պէտք է տալ \*): Իսկ հազի,  
ինչպէս նաև չըքնանալու համար Երբէք խաշ-  
խաշի ջուր կամ օշարակ հարկաւոր չէ տալ:  
Հազի համար տար պէտք է պահել և կուրծքը  
կակղացնող ծաղիկների խաշուքը պէտք է տալ,  
զոր օրինակ՝ յասմիկի (եասէմի) մանուշակի,  
տուղտի, մուշի—ծաղկանց խառնուրդը:

Եթէ վերոյիշեալ հիւանդութիւնները քիչ  
ժամանակում այս դեղերով չըբուժուի, անմի-  
ջապէս բժշկի պէտք է դիմել:

\*) Վիշիի ջուր չգտնուած ժամանակ պէտք է  
բիկար բօնատ դը սուտ ասուած աղից մէկ գրամ  
250 գրամ ջրի մէջ խառնել և այն դործ ածել Վի-  
շիի ջրի պէս:

Հ Ր Ա Տ Ա Ն Ղ 16-դ.


Մանուկին՝ առաջին երեք ամիսներում  
պէտք է պատուաստել. իսկ, եթէ ծաղկի հա-  
մաճարակ հիւանդութիւն պատահի՝ պէտք է  
պատուաստել առաջին շաբաթներում:

Ամէն եղանակներին կարելի է պատուաս-  
տել: Պատուաստուած մանուկը ուրիշ շատ մա-  
նուկների համար պատուաստ կարող է մատա-  
կարարել առանց ամենափոքր կերպով վնասե-  
լու. ընդհակառակն՝ շատ օգտակար է մանու-  
կին: Հետևաբար պէտք է արհամարհել մանու-  
կի պատուաստը զգալու նախապաշարումը:



Վ Յ Ր 2


Յօրինուած Ֆլօրեանի թարգմ.  
 դադ. լեզուից (սակաւաթիւ) . — 40  
 Օրիվեր-Գօլդամիթ-Վէքֆելդի երէց,  
 Ֆրանսերէնից թարգմ. Մ. Բու-  
 ղաղեանց (սակաւաթիւ) . . . . . 1 —  
 Բաֆֆի—Պարոլը Հայկազն (Պրոյե-  
 ռեսիոս) . . . . . — 20  
 — Ով էր մեղաւոր . . . . . — 20  
 Հոֆման Փրանց-Հաւատարմութիւ-  
 նը ամեն արդելքներին յաղթում է  
 թարգմ. Յար. Առաքելեանցի . — 40  
 — Խաւարից զէպի լոյս,  
 թարգ. Յար. Առաքելեանցի . . . . . — 40  
 Լէսսինգ—Նաթան իմաստուն զրա-  
 մատիկական բանաստեղծ. 5 գործ.  
 թարգմ. Գ. Բարխուդարեանցի . . — 60  
 Շիլլեր—Վիլհելմ Տէիլ—զրամա 5  
 գործ. թարգմ. Գ. Բարխուդա-  
 րեանցի . . . . . — 60  
 — Գօն Կարլոս. զրամական  
 բանաստեղծ. թարգմ. Գ. Բարխու-  
 դարեանց . . . . . 1 —  
 — Օրիվեր-Ֆրանկ  
 սանական ողբ  
 Գ. Բարխուդարեանցի . . . . . — 60  
 Վարդարան —  
 թեան զեռա . . . . . — 20  
 Խատիսեանց, Արմէնյան Երեմիանց  
 ընծայ Հատոր ա. . . . . — 40



Յօրինուած Ֆլօրեանի թարգմ.  
 դադ. լեզուից (սակաւաթիւ) . — 40  
 Օրիվեր-Գօլդամիթ-Վէքֆելդի երէց,  
 Ֆրանսերէնից թարգմ. Մ. Բու-  
 ղաղեանց (սակաւաթիւ) . . . . . 1 —  
 Բաֆֆի—Պարոլը Հայկազն (Պրոյե-  
 ռեսիոս) . . . . . — 20  
 — Ով էր մեղաւոր . . . . . — 20  
 Հոֆման Փրանց-Հաւատարմութիւ-  
 նը ամեն արդելքներին յաղթում է  
 թարգմ. Յար. Առաքելեանցի . — 40  
 — Խաւարից զէպի լոյս,  
 թարգ. Յար. Առաքելեանցի . . . . . — 40  
 Լէսսինգ—Նաթան իմաստուն զրա-  
 մատիկական բանաստեղծ. 5 գործ.  
 թարգմ. Գ. Բարխուդարեանցի . . — 60  
 Շիլլեր—Վիլհելմ Տէիլ—զրամա 5  
 գործ. թարգմ. Գ. Բարխուդա-  
 րեանցի . . . . . — 60  
 — Գօն Կարլոս. զրամական  
 բանաստեղծ. թարգմ. Գ. Բարխու-  
 դարեանց . . . . . 1 —  
 — Օրիվեր-Ֆրանկ  
 սանական ողբ  
 Գ. Բարխուդարեանցի . . . . . — 60  
 Վարդարան —  
 թեան զեռա . . . . . — 20  
 Խատիսեանց, Արմէնյան Երեմիանց  
 ընծայ Հատոր ա. . . . . — 40

2013

20196



24. Մանկավարժական խորհրդածու-  
թիւններ . . . . . — 60

Ջաքարիա Գրիգորեանցի աշխատասիրու-  
թիւնները՝

1. «Մարդակազմութիւն».— տարրական  
դասեր, 18 պատկերներով, դըպ-  
րոցների համար. սպառած է և  
պատրաստուում է նոր տպագրու-  
թիւն:
2. «Ջուր».— տարրական նախազիտելիք  
բնական զիտութեան, 11 պատ-  
կերներով . . . . . — 35



3. «Մանկութիւն».— մանուկների հա-  
մար—Հայ մայրերի և իրանց փո-  
քրը մանուկների օգտին, 28 պատ-  
կեր . . . . . — 40
4. «Մանկութիւն» — գրքի բացատրա-  
կան ձեռնարկ . . . . . — 10

